



“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.


ՀԱՏՈՐ ԺԸ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, 1889

ԹԻԻ 12

ՌԻԿԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Հոկտեմբեր ամսոյ Տղայոց Աւետարեբրին մէջ խօսած ենք Զուիցերիոյ Լիւսէրն քաղաքին վրայ: Մեր առջևի պատկերին մէջ կ'երևի Լիւսէրն լճին մէկ մասը: Լճին արևմտեան կողմը կը գտնուի փիլաթուս լեռը որ կ'երևի պատկերին ետևի կողմը: փիլաթուս է Պիղատոս անուան Լատիններէն ձևը: Լեռան այս անունը տրուած է, զման ղի ըստ հին աւանդութեան մը Պոնտացի Պիղատոս արքայուեցաւ: Հռոմայ կայսրէն այժմու Զուիցերիա, և յուսահատութենէն ինքզինք այս լեռնէն վարձ այդ լիճը նետեց: Որովհետև լեռը քանի մը միոն հեռի կը գրանուի լճէն, հրաշք պէտք էր համարել այդպիսի բան մը ընելը: Բայց մենք կրնանք տարակոյս չունենալ թէ այն չար կուսակալը բնաւ չտաւ: ցաւ հրաշք գործելու կարողութիւն մինչև անգամ ինքզինք սպաննելու համար:



Սրանց ասոր անկարելի պիտի ըլլար շոգեկառքին վեր ելլել այսպիսի դառ ի վեր ճամբայէ մը:

ԵՐԿԻ ՄԸ ԾԱԳՈՒՄԸ

Թէ ինչ առթիւ շարադրուեցաւ “Օրհնեալ աշխարհ մը կայ երկրէս հեռու” երգը, հետագայ կերպով կը պատմէ նիւ Եսրբի Թեոֆիլ լրագիրը: Յիշեալ երգը շարադրուեցաւ 1838ին Միգղիերէն լեզուաւ, ձեռամբ Անտրիու Եունկ անուն մարդու մը որ այժմ ութսուն տարեկան է և կը սիրէ թէ՛ երաժշտութիւնը և թէ՛ մանուկները: Երգին եղանակն է հին Հնդկական եղանակ մը, որոյ քաղցրածայնութիւնը Մր. Եունկի նման երաժշտի մը ուշադրութիւնը գրաւեց մեծապէս, և տպաւորեցաւ անոր մտքին մէջ, մինչև որ անով մէկ տեղ երգուելու յարմար խօսքեր չաբողբելու կարող եղաւ: Մր. Եունկ

Լիւսէրն լճին հիւսիսային կողմը, քաղաքէն իբր սասը միոն հեռի, կը գրանուի ուրիշ լեռ մը Ռիկի կոչուած: Սա է լճին երեսէն 4,500 ոտք բարձր, և անոր զագաթէն կրնայ դիտուել Զուիցերիոյ ամենէն ընդարձակ և գեղեցիկ տեսարաններէն մին: Մէկ կողմն է Լիւսէրն լիճը, որ դէպի հարաւ կը ծռի իւր արևելեան ծայրէն և կը ձեւացունէ Ռրի ծոցը: Միւս կողմն է աւելի փոքր լիճը, Զուկ: Հեռին կը տեսնուին ոչ միայն Զուիցերիոյ այլ նաև Գաղիոյ և Գերմանիոյ լեռներու գագաթներ: Տեղւոյն գեղեցկութիւնը

հազարաւոր այցելուներ իրեն կը քաջէամէն ամառ, զորոնք ընդունելու համար պանդոկներ շինուած են անոր գագաթը: Առաջ ոտքով կամ ձիով կ'ելլուէր լեռը, և այս կերպը տակաւին յոյժ հաճոյական և զուարճալի է այնպիսեաց համար որ ունին հարկաւոր զորութիւնը և ժամանակը: Բայց մտտեա շինուեցաւ իբր հինգ քիլոմետր (3 ½ միոն) երկայնութեամբ երկաթուղի մը մինչև լեռան գագաթը, այնպէս որ այժմ դիւրին է վեր ելլելը: Այս երկաթուղին ունի երեք գլիժ փոխանակ երկուքի, և միջին գլիժն վրայ կը քալէ ատամնաւոր անիւ մը:

երգը երգեց իւր մտերիմ մէկ բարեկամին քով որ էր դիրքերու հրատարակիչ, և որ անմիջապէս տպագրութեան յանձնեց զայն: Այժմ տասնևինը տարբեր լեզուներու թարգմանուած է այն երգը: Կ'ըսուի թէ անգամ մը Թէֆլէրի, Երևելի Անգղիացի հեղինակը, չկրցաւ իւր արատաւքը զսպել երբ լսեց որ կ'երգէին զայն Լոնտոնի նուաստ և աղտեղի մէկ փողոցին քարերուն վրայ նստող աղքատ և ցնցոտիներ հազար մանկանց խումբ մը: Անոր փափուկ սիրտը չկրցաւ դիմանալ երբ Երևակայութեամբ իրարու դէմ կը դնէր շուրջը գտնուած ազատ զուժիւնք և թշուառութիւնը և այն սուրբ, պայծառ և երջանիկ բնակարանը զոր կը յիշեցունէին երգին խօսքերը:


ԱՄՍՏՐԱԼԻՈՅ ԲՆԿՆԵՐԸ

Ահա երկու պատկերներ որ կը ներկայացունեն Աւստրալիոյ բնիկները, այսինքն նախկին բնակիչները: Առաջին պատկերին մէջ կը տեսնենք զանոնք վայրենի վիճակի մէջ: Ասկէ առաջ երբ մի և նոյն ցեղէ երկու անձանց մէջ վէճ ծագէր, չատ անգամ կը կուռէին անոնք նիզակներով կամ մասնաւոր տեսակ մը բիւրերով ինչպէս կը տեսնուի պատկերին մէջ, և կուռը կը շարունակուէր մինչև որ ցեղին մեծերուն վճիռը թէ որսն է իրաւունքը, գոհացուցիչ թուէր: Գործածուած յիշեալ բիւրը երբեմն կ'արձակուէր պլատուակի շարժմամբ, այնպէս որ լատարձուողի մը ձեռաց միջոցաւ, երբ կը նետուէր, կը դառնար իւր առանցքին վրայ օդին մէջ և դարձեալ ետ կուգար և կ'իյնար զայն արձակողին ոտքերուն քով կամ կը զարնէր անոր ետևը գտնուած առարկայ մը:

Այս բնիկ ցեղերն էին անգութ, վարքով ապականեալ և ծոյլ: Ապիտակամորթ գաղթականաց հոն գալէն առաջ կ'ապրէին ըստ մեծի մասին որսորդութեամբ և ձկնորսութեամբ. կ'ուռէին նաև արմատներ զորս ձեռք կը բերէին առանց մշակելու երկիրը: Եւ ապրելու այս կերպը պատճառեալ որ կուռէին անոնք սպիտակամորթ գաղթականաց հետ: Անգամ մը անոնց ցեղապետներէն մին ըսաւ Անգղիացոյ մը, «Մեր ժողովուրդը չկրցանար հասկնալ թէ անասունք կամ բոյսերը կրնան վերաբերիլ մէկ մարդու և ոչ շատ մարդոց: Երբեմն բնիկներու խումբ մը վար կ'իջնեն բլուրներէն յօգնած և անօթի, և կը յարձակին

այն օտարտի անանոց վրայ զորոնք դուք կը կոչէք ոչխար, կը նետեն նիզակները և ահա կ'ունենան առատ որս: Այնուհետև դուք, սպիտակներդ, կուգար և կը զարնէք խեղճ սևերը: Կամ քանի մը անօթի կանայք կը գտնեն գեանախնձորի (խաբիտ) պարտէզ մը

և ահա այս իրողութիւնը լուսարանուած կը տեսնենք պատկերին մէջ:



«ՀԱՅՐԻԿԸ ԵՈՒՏՈՎ ՊԻՏԻ ԳԱՅ»

Հետագայ սրտաշարժ պատմութիւնը կը գտնուի Ամերիկեան լրագրի մը մէջ:



ԱՄՍՏՐԱԼԻՈՅ ԲՆԿՆԵՐԸ

և բնականապէս կը փորեն դետիւր, կը հանեն դեմնախնձորները և կը դրնեն զանոնք իրենց սուպրակներուն մէջ, և դուք կը զարնէք կիները: Բայց ես կեանքի դէմ կեանք կ'ուզեմ»: Եւ այսպէս նախկին բնակչաց թիւը պակսեցաւ հետզհետէ, մինչև այնչափ որ

Ամերիկա ծնած չորս փոքրիկ Գերմանացի տղաք կը ճամբորդէին միայնակ Ամերիկայի Արևելեան նահանգներէն մէկէն դէպ ի Ռաչինկլթըն առան նոր նահանգը որ կը գտնուի խաղաղական Ովկիանոսի եզերքը: Սխալմամբ մը անոնք Ռաչլա Ռաչլայի եր-



ԲԱՆԱԲԱՆՔԵԱԿ ԱՄՍՏՐԱԼԻԱՅԻՔ, ԱՅՐ ԵՒ ԿՆՆ

հիմա հաւանականապէս 50,000 է պահաս է անոնց թիւը, մինչ սպիտակք աճած և հասած են դրեթէ 4,000,000ի: Զանքեր եղած են Աւստրալիոյ բնիկները Բրիտանեութեան դարձունելու քաղաքակրթելու, և այս ջանքերը պարտապէրած չեն: Երկրորդ պատկերը կը ներկայացունէ բնիկ Աւստրալիացի քաղաքակրթեալ այր մը և կին մը: Երկար ժամանակէ հետև քաղաքակրթութեան օրհնութիւնը վայելող ցեղերուն մէջ սովորաբար կ'ինն աւելի գեղեցիկ է քան այլը, բայց բանը այսպէս չէ վայրենեաց սերունդին համար,

կաթուղւոյ կայարանը հանուեցան, ուր այն կայարանի գործակալը տեսաւ որ տողոց ամենէն մեծը որ էր տասներկու տարեկան աղջիկ մը, դառնապէս կուրար, և միւսները կը ջանային միթարել զնա: Անոնցմէ մին իւր ձեռուներով գրկած քրոջը պարանոցը, կ'ըսէր, «Հոյրիկը չուտով պիտի գայ, քոյրիկ: Ինք չգիտեր թէ մենք դեռ հոս ենք, բայց չուտով պիտի գայ, գիտեմ որ պիտի գայ չուտով»: «Բայց մենք շատ անօթի ենք», պատասխա-

նեց մեծը : « Բայց » ըսաւ անուշիկ տղան , իւր աիւր անոր կռնակին դըպցունելով , « հոգ չէ , քոյրիկ , շատ չուշանար հայրիկը , և մենք շատ մը ուսելիք պիտի ունենանք : »

Երբ երկաթուղոյ գործակալը լսեց զայս , և տեսաւ քաղցր սերոյ այս ապացոյցը , հարցուց անոնց , « Տղաք , շատ անօթի՞ էք : » « Այո , տէր , շատ անօթի ենք : » « Ի՞նչ , Ուալլա Ուալլայի մէջ շատ անօթի՞ մնան տղաքը . այս չկրնար ըլլալ » , մտնաց իւր քթին տակէն : Եւ հետեւեալի միջոցաւ խօսեցաւ մէկուն . « Չորս սովալըսկ տղոց համար կերակուր , չուտով պատրաստէ : » Եւ ինք աղաքը տուն ասնելով իւր ճոխ սեղանը նստեցուց զանոնք : Եւ սա էր այս չորս պղտիկներուն պարզ պատմութիւնը . Մնոնց հայրը քիչ մը առաջ՝ գացած էր Արեւմտեան նահանգները , Ուէյթսպուրկի մօտ տեղ մը , նպատակ ունենալով աղոց մայրը և տղաքն ալ տանիլ հոն երբ պարագաները յարմարէին : Բայց մայրը հիւանդացաւ և չուտով մեռաւ : Բարեկամք մարդասիրաբար ճամբայ հանեցին տղաքը որ երթային իրենց սգաւոր հօրը քով , բայց սխալմամբ հոս եկած մնացած էին . և թէպէտ մանկանց հայրը անձկութեամբ կը սպասէր անոնց Ուէյթսպուրկի մէջ , մնացին հոս Հինգշաբթի օրէն մինչև Շաբաթ գիշեր , առանց ունենալու պատաստ մը հայ , քնանալով նստարաններուն և տախտակամածին վրայ , վասն զի անոնք փոքր ըլլալով և բնականապէս համեստ , չկրցին յայտնել իրենց վիճակը , մինչև որ անոնց մէջէն մեծը մաշելով իրմէ փոքրերուն համար հոգընեղէն , և ձանձրանալով սպասելէն իրենց սիրելի հօր երեսը տեսնելու որ բնաւ չեկաւ , և անօթութենէ տանջուելով , այլ ևս ճար չմնաց վրան , և իւր լացին ձայնը լսուելէն ետքը հասկըցուեցաւ անոնց վիճակը :

Բայց չուտով գանուեցան պատրաստ ձեռքեր և բարեւեր սիրտեր , ինչպէս միշտ կը պատահի երբ սկար և փափուկ անձիքը կը գտնուին նեղութեան մէջ : Եւ երբ երեկոյ եղաւ , և կայարանէն ճամբայ ելաւ լուսոյ ճառագայթներ արձակող կառախուսիքը շառաչելով , տղաքը ուրախ և շնորհակալու սրտով նաև զարմանքով կը գտնուէին առաջին կարգի շքեղ և փառաւոր կառքի մը կախով բազմոցներուն վրայ հանգիստ , իրենց հետ ունենալով մեծ կողով մը որ կը պարունակէր պատուական բաներ շատ մը աւելի քան որչափ երբեք ունեցած

էին , և արագութեամբ տարուեցան դէպի Ի հիւսիս ուր պիտի գտնէին իրենց հայրը :

ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՄՈՒԷԼ ՔՐԱՎԹԵՐ

Իբրևոնին որոյ պատկերը կը տեսնեք հոս , է բուն Ափրիկեցի սև մը և յոյժ պատուական մարդ : Ինձ է Արեւմտեան Ափրիկէի Երուսաղիմի մէջ , երբ յամին 1821 էր տասնութ տարեկան , գերեթաճառաց ձեռքն ինկաւ հօրը սպաննուելով մինչև կը պաշտպանէր իւր բնասնէրը :

անոր գաւառէն . նա յետոյ եղաւ անոր կինը , և երկուքը աւելի քան յետոն տարի մէկտեղ ապրեցան :

Մը . Քրատթըր փափաքեցաւ քարոզել Աւետարանն իւր հայրենակցաց , և գնաց Անգլիա կատարելագործել իւր կրթութիւնը : Յամին 1843 վերստին դարձաւ Ափրիկէ . և անոր հայրենակիցք ըսելով որ իրենց ցեղէն եղող անձ մը իրենց բնիկ լեզուով կը քարոզէր , հաճութեամբ մտիկ կ'ընէին անոր : Օր մը իւր բնակարանը բերուած գերիններուն մէջ իւր հօրեղայ-



BISHOP CROWTHER.

ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՄՈՒԷԼ ՔՐԱՎԹԵՐ

Քանի մը անգամ ծախուեցաւ և երկու անգամ ջանաց ազատուիլ թշուառութենէ՝ սպաննելով ինքզինք : Ի վերջոյ քանի մը ուրիշ գերիններու հետ նաև դրուեցաւ Պրազիլ դրկուելու համար . բայց նաը բռնուեցաւ Անգլիացոցմէ և ինք ազատ արձակուեցաւ : Նաև ունեցաւ միտինարական դպրոց մը ի Ֆրիթաուն , և վեց ամսոյ մէջ սորվեցաւ կարգալ Նոր կտակարանը շատ լաւ կերպով : Տասնութինոց տարեկան հասակին մէջ եղաւ Քրիստոնեայ և մկրտուեցաւ , իւր անունը որ առաջ էր Սաճայ , փոխուելով Սամուէլ Քրատթըրի : Իւր հետ այն նաւէն աղաւաղ մանկանց մէջ կը գտնուէր ազգիկ մը

ըր ճանչցաւ , և աղատեց զնա վճարելով տասնութեկ լիրա փրկանք : Իւր այս հօրեղբայրէն հասկցաւ որ տակաւին կենդանի էր իւր մայրը , և մարդըրկելով բերել տուաւ զնա : Յետոյ ուրիշ տանն մը իւր եղբայրը , երկու քոյրերը և անոնց չորս գաւառները բերուեցան իւր բնակարանը գերեաց խումբի մը հետ . և ինք անոնց փրկանքները վճարելով ազատեց ամէնքն ալ : Այնուհետև իւր մայրը և անոր չորս քեռորդիները մի և նոյն աւուր մէջ մկրտուաւ հաճոյքը վայելեց : Սամուէլ Քրատթըրի աշխատութիւններն օրհնուեցան , և 1,500 Քրիստոնեայք հաւաքուեցան իւր շուրջ : Բայց հեթանոս ցեղապետք վառն-

տեղին զնա և միւս միսիոնարները 1861 ին. Յամին 1864, այցելեց Անգլիա, և ձեռնադրուեցաւ եպիսկոպոս: Մինչև հիմա աղէկ աշխատած է նրկեր գետոյն վրայ, իւր հսկողութեան ներքև ունենալով միսիոնարական տասներկու կայաններ: Մօտերս դարձեալ դացած է Անգլիա այցելութեան համար, և ընդունուած է պատուով: Էջօթանասունևութ տարեկան է այժմ:

ԶԳԱՑՈՒՆ ՁԻ ՄԸ

Ձիերը նշանաւոր են զգայուն լինելու մասին. և կը պատմուի թէ ձիեր մեռած են իրենց վիշտէն:

Ահա նշանաւոր դէպք մը. Ամերիկեան փոքր քաղաքի մը մէջ մինչ ձիարչաւի (Էրբը) հանդէս մը տեղի կ'ունենար, ձիերէն մէկուն սրունքները վնասուեցան, այնպէս որ չէր կրնար քայլել: Պանդոկն առնուեցաւ. ախոռը դրուելով կապուեցան սրունքներն այնպէս որ ըստ կարեւրոյն հանգիստ ըլլար: Կէս գիշերուան ատենները ձիարչաւին ձիերն սկսան տարուել իրենց տեղերը. և որովհետև ձիերուն խումբը պանդոկին քովէն կ'անցնէր, թուեցաւ թէ յիշեալ ձին կը հասկնար որ ինք անոնց կարգէն դուրս ձգուած էր, և ուստի անոր տագնապը և տուտպանքը ոստտիկ եղան: Ինք կը կանգնէր ականջները սրած լաւ լսելու դիրքի մէջ, և յետոյ երբ անոր ականջներուն հասան ետ դարձող կառքերուն ձայները, ախոռին մէկ կողմէն միւսը կ'երթար դուռին քսելով իւր քիթը և դուրս ելլելու ամէն ջանք ընելով: Ախոռեպանը կը ջանար հանդարտեցունել զայն. բայց ձին հանգիստ չեղաւ: Աւելցաւ զրգուումը, և միւս ձիերուն ձայները դադարեցին երկար ժամանակ ետքը քրտինքը կը վազէր հոսանքի պէս, և մարմնոյն ամէն մասը կը դողդոջէր: Ի վերջոյ ախոռեպանը գնաց տուն, արթնցուց ձիուն տէրը, և ըստ անոր թէ իւր կարծիքն այն էր որ ձին պիտի մեռնէր եթէ ձիարչաւի ձիերէն մէկ քանին չբերուէին անոր քով ընկերանալու համար: Արչալոյսի ատենները տէրը ձի մը հեծած գնաց ձիարչաւին: Հասաւ անոր տասը տասներկու մղոն հեռին, և ձիարարմանը որում յանձնուած էր վնասուած ձիուն հոգը, ետ դարձաւ անոր հետ: Էրբը հասան ախոռը, ահա մեռած էր ձին: Ախոռեպանն ըսաւ թէ ձին գրեթէ ժամ մը մնաց կատարելապէս հանդարտ և անշարժ, և կը թուէր թէ

անոր բոլոր զգայարանները սաստիկ ձգտեալ էին, յետոյ առանց նշան մը ցուցնելու ձին ինկաւ մեռաւ հապիւ որ և իցէ ճիշդ մը ընելով:

ԱՆՖՈՆՏՈՅ, ՍՊԱՆՏՈՅ ՄԱՆՈՒԿ ԹԱԳԱՒՈՐԸ

Սպանիոյ երեք տարեկան փոքրիկ թագաւորը, Ալֆոնսոյ, այս ամառ շատ ժամանակ մը անցուց Սան Սէպասթիանի մէջ, և երբ ծովեզերքը կը գտնուէր, կը վարուէր ճիշդ հասարակ սղոց պէս: Կը փոքրէր աւազը, և կը զբօսնուէր իւր ոտուքներովը և ձեռուքներովը խաղալով ջրին հետ: Ամէն առաւօտ այս ինչ ժամանակ արքունի դղեակին պատշաճ կ'ելլէր զօրաց նուագածութիւնը լսելու համար: Շատ անգամ անոր փոքրիկ խաղի ընկերները կ'երևէին. և նա պատշաճաբար վանդակին (Էրբը) վրայէն վար կը ծռէր կը խօսէր անոնց հետ իւր մանկական բառերովը և ոճովը: Երբ պատահանին վրայ ձեռաց ձայն մը կը լսէր, կը պոռար, «Ատի՛էօ (մնաք բարով), ես ներս երթալու եմ, մայրիկս ինձի՛ կը սպասէ:» Կէս օրէն ետքը կ'առնուի կը պտտացունէին զնա և երեկոյին կանուխ անկողին կը դրուէր: Եւ լաւագոյն բանը որ կը պատմուի թէ տեղի կ'ունենար օրուան այդ հաճոյական ժամուն մէջ, սա էր որ անոր մայրը միշտ ներկայ կը գտնուէր անոր քով լսելու համար իւր աղօթքն ըսելը, և համբուրելով գիշեր բարի կը մաղթէր իւր մանկան: Օր մը մամուկ միապետը բաւական աղմուկ հանեց եկեղեցոյն մէջ, կանչելով իրեն սիրական մէկ դիմուորը որ կը գտնուէր եկեղեցոյ պատշգամբին վրայ: «Ահա հո՛ն է ճուռնիթոյ, ահա հո՛ն է», պոռաց: Թագուհի մայրը և դայեակը աշխատեցան հանդարտեցունել զնա քանի մը վայրկեանի մէջ, բայց պաշտամունքին բաւական ընդհատեցին ետքը:

ՌՈՒՍՈՒՑ ԶՄԵՌԸ

Ռուսիոյ ձմեռը ոչ միայն իւր երկարութեամբ կը տարբերուի ուրիշ երկիրներու ձմեռէն, այլ նաև ուրիշ պարագաներով: Մինչև անգամ եթէ հովը պաղ ըլլայ, այնչափ զօրաւոր չըլլար որչափ Ցանիմարքայի մէջ, այնպէս որ Ռուսիոյ մէջ աւելի սաստիկ ցուրտի կրնայ դիմանալ մարդ մինչ չկրնար դիմանալ Ցանիմարքայի մէջ անկէ մեզմ ցուրտի: Չմեռը կը ներգործէ Ռուսիոյ ժողովրդեան ամբողջ ապրելու երանակին և բարուց վրայ: Գիւղացին որ ստիպուի քաշուի իւր խրճիթը լաւ մը դոցելով ցուրտին դէմ իւր պատերուն ծակերը և պատահանները: Խորհրդի թղը կ'ապականի վասն զի կը

լուսաւորի վառելով մախր (չըր) որ կը դրուի մեծ ջերմոցին («պ») շատ մօտ: Գիշերը իրենց յատուկ ջերմոցին վրայ կը քնանայ ամբողջ ընտանիքը: Գիւղացին կը քնանայ առանց հանելու իւր հանդերձները, որոց մէջ կը գտնուի նաև անոր ոչխարի մորթը: Չհաներ իւր հանդերձները բոլոր շաբաթը, բացի այն ժամանակէն երբ Շաբաթ օրը կը լուսացուի Ռուսական սովորութեան համեմատ: Բայց որովհետև ոչխարի մորթը նորէն վրան կ'առնու, ուստի նորէն կը նեղուի լուրի, ոչխաներէ ևն:

Բարձր դասէ անձինք երկայն ձմեռուան գիշերները ցերեկի կը դարձունեն: Սբ. Փեթրոսպոլի մէջ ընկերական կեանքը աւելի բարձր է աստիճանաւ քան որչափ գիշերային կեանքը վարչաւի մէջ: Մինչև անգամ բալխիով խմբովին ճամբորդութիւնը գիշերները տեղի կ'ունենայ հոն: Գիշերային լոյն հանդարտութեան մէջ կը սրանայ թեթև բալխիքով քով լուսած երեք ձիերէ քաշուելով ձիւնապատ և սառած դաշտերու վրայէ: Մեռեալ լուսութեան և արչաւատոյ արագութեան այս միացումն է որ Ռուս ժողովրդեան կ'ընծայէ զբօսանքը և գոհունակութիւն:

ԶԱՐՄԱՆԱԼԻ ԲՆԱՅՈՂ ՄԸ

Հետաքրքրական դէպք մը զոր թերևս կրնանք կոչել քննածութիւն, որ պարզ խօսքով կը նշանակէ թէ մինչ մարդու մարմինը կը քնանայ, միտքը կ'անցնի գործունէութեան խորհրդաւոր փիճակներէ, կ'ըսուի թէ պատահած է Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէկ դիւղին մէջ ի Միննէսթաւ: Աւելի քան հինգ տարի առաջ Հարան անուն իբր յիսուն տարեկան Գերմանացի մը, ըստ սովորութեան կերաւ իւր առաւօտեան կերակուրը, յետոյ քունը գալով անկողին մտաւ: Երեք տարի այնպէս քնացած մնաց, բայց օրը կէս ժամ կ'ընդմիջուէր անոր քունը: Ամէն գիշեր կ'արթնար կէս գիշերուան ատենները, կ'ելլէր, կ'ընէր լաւ ճաշ մը, և կը խօսէր իւր բարեկամաց հետ, մինչև որ յանկարծ կու գար թմրութիւնը և դարձեալ կը մտնէր անկողին: Երբ լրացաւ երեք տարին, ամիսներով ապրեցաւ ուրիշ մարդոց պէս, և կարող էր դուրս ելլել պարտիլ թէպէտ սրունքները շատ տկարացած էին: Այնուհետև դարձեալ մտաւ անկողին, և վերջին երկու տարիներս քնացած է. բայց հիմա բընաւ չելլեր անկողինէն, և կ'արթննայ այն ժամանակ միայն երբ բարեկամները կը յաջողին արթնցունել զնա:

Ամերիկայի Միսիոնարաց Ընկերութեան Գրաստան, Արտօնատէր Զ. Բ. ԿԻՐԿՈՐՅԱՆ
Տնօրէն—Մարապիւր Է. Ս. ՊԵՏՐՅԱՆ
Ֆինանսաւոր Եօզուր Է. Ս. ՊԵՏՐՅԱՆ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈՐ ԳՕՅԱՅԵԱՆ